

նախահաշխութ կազմուի և ընդհանուր ժողովին առաջարկուի սեզոնը վեջանալուց 10 օր առաջ, ներկայացնելով միաժամանակ համառօտ հաշիւ նախորդ տարրուայ գործունէութեան մասին:

Մելքիորաւարական մասնաժողովի գոյութիւնը ժողովը գտաւ աւելորդ և յանձնաց վարչութեան կազմել բետքերառուար, իսկ եթէ հարկաւոր լինի պիէսների լեզուն կոկել, վճարով հրաւիրել կարող անձանց այդ գործը կատարելու:

Ընտրուեցին նոր գրուած անդամները, և յանձնաբարուեց վարչութեան ուղարկել պատգամաւորութիւն հանդուցեալ ակինին Մակարեանի ժառանգներին ընդհանուր ժողովի կողմից չնորհակալութիւն յայտնելու 300 ր. նուէրի համար:

(«Մշակ»)

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԱՂԱՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

«ՊրաՎИՏ. ԵԽСТН.» մարտի 15-ին տպուած է հետեւեալը. Զրատուուստ քաղաքում (Ուֆայի նահանգ) արքունի երկաթագործական և բելսաձուլական գործարանում մայիսի 9-ին բանուորները թւով 160 հոգի մերժելով ընդունել նոր վարձատեալրակները՝ յայտնեցին ամսի 10-ից գործադուլ անելու մասին: Մարտի 9-ին բանուորները իրանց հանդիսատ էին պահում, սակայն ամսի 10-ին 500 հոգուց բաղկացած ամրոխը հաւաքուեց հրապարակի վրայ՝ գեղոնութիւն յայտնելով աշխատանքի նոր պայմանների դէմ: Ի նկատի ունենալով, որ կարող են անկարգութիւններ ծագել, Ուֆայի նահանգապետ ի. պ. խ. Բոգդանովիչը, ուֆիմեան շրջանային դատարանի դատախիազը և նահանգական ժամանական վարչութեան մեծաւոր գնդապետ Շատով մեկնեցին Ուֆայից Զրատուուստ: Մարտի 13-ին բանուորների ամրոխը պահանջում էր երեք կալանաւորուածների ազատութիւնը, պաշարել էր ոստիկանական վարչատունը, բոտմիստը Դոլովիվի բնակարանը և լեռնային մեծաւորի տունը, ջարդելով նրա ապակիները և դուները: Բազմաժամ յորդորներից յետոյ, երբ ամբոխը գոռով չը թողեց դատախիազին վնալ բանուը և ուժով գոռյթ էր տալիս նահանգապետի յետերից՝ չը նայելով նրա յորդորին՝ լեռնային մեծաւորի տան վրայ, — նահանգապետը սախուած էր առաջարկել վաշտապետին գործել գէնքով: Տան վրայ գոռյթ գործող և ատօնականներ արձակող ամրոխը հրացանաձգութիւնից յետոյ ցրուեց. աեղն ու աեղը մնացին 28 սպանուածներ, վիրաւորուածների թիւը 50 հոգուց աւելի է: Մարտի 14-ին գործադուլը դադարեց, և բոլոր բանուորները սկսեցին աշխատանքը:

Նահանգապետ Բոգդանովիչի սպանութիւնը.—Մայիսի 6-ին ցերեկուայ չորրորդ ժամին նահանգապետ Բոգդանովիչ միայնակ զրօնում էր քաղաքային պարկում, ուր շատ զբօանողներ կային: Անցնելով տաճարին մօտակայ կողքի ծառուղիով, նրան դիմաւորեցին երկու թէ երեք չարագործներ, ճիշտ չէ խմացուած, մէկը գլուխ տալով մատուցեց մի կնքուած ծրար, իսկ միացածները միաժամանակ մի քանի անգամ ատրճանակ արձակեցին մէջքին և կրծքին: Մահը վրայ հասաւ անմիջապէս: Եկեղեցու պահապանը առաջինը տեսաւ չարագործութիւնը և փաղեց բռնելու յանցաւորներին, բայց վախճանալով իր վրա ուղղուած ատրճանակից, հնարաւորութիւն տուեց նրանց վախճելու: Հաւաքուած ժողովուրդը անշնչացած մարմինը փոխադրեց նահանգապետի տունը, ուր անյապաղ եկան իշխանութիւնները: Քննութիւնը կատարուում է: Երեկոյեան 9 ժամին կատարուեց առաջին հոգեհանգիստը:

Հանգուցեալ Ն. Մ. Բոգդանովիչի մարմնի դատական-բժը կական բացումից երեաց, որ դաւադիր չարագործները գնդակ են արձակած եղել արդէն անշնչացած մարմնի կռնակին: Սիրար ծակուած է երկու գնդակով, թոքերը չոր, իսկ լիարդը, ստամոքսը և ձեռքը՝ երկու գնդակով: Բացի վերջիններից՝ միւս զբնդակներից իւրաքանչիւրը անպայման մահացու է: Քննութիւնը շարունակուում է: Մարդասպանները դեռ չեն գտնուել: Բացի մասնաւոր հաստատութիւններից՝ իւրաքանչիւր օր, առաւտօներեկոյ հոգեհանգիստ է կատարում Կլեմենտիյ եպիսկոպոսը: Անկարելի է նկարագրել այն անձերի վիշտը, որոնք մօտիկից ճանաչում էին հանգուցեալին: Մարմինը կը փոխադրուի Պետերբուրգ: Դագագը թաղուած է ծաղիկների մէջ: Պասկաների մէջ ացքի է ընկնում—Ուժայի ազնւականութեանը՝ «Պարտաճանաչութեան արիստոր հերոսին» մակագրով, և ժողովրդական ուսումնարաններինը՝ «Ժողովրդական դպրոցի հշմարիտ բարեկամին» մակագրով:

Финляндская Газета-ուում տպուած է.

«Ապրիլի 24-ին (մայիսի 7-ին) տեղի ունեցաւ՝ վարչական ատեանների պաշտօնատար անձերին ծառայութիւնից հեռացնելու կարգի մասին եղած Բարձրագոյն որոշմանը (1902 թ. օգոստոսի 1-ին (14-ին) շատ նշանաւոր մի բացատրութիւն: Գեներալ—նահանգապետի մանսախոնարհ զեկուցմանը Թագաւոր Կայսրը բարեհածեց Ամենաողորմածաբար պատասխանել, որ վերը յիշած Բարձրագոյն որոշումը վերաբերուում է ուսումնարանական ատեան-

ներում ծառայող բոլոր անձերին, բացի Կայսերական Արքսանդրեան համալսարանի պաշտօնատար անձերից»:

Սյա բացատրութեան առիթ է եղել Մառնու Բողենդալի գործը, որը լինելով ծառայութեան մէջ ուսումնարանական ատեանում և ուշաբորդեան ֆինլանդական լիցէի դասատու (առաջ նա այդ լիցէի բեկար էր, բայց Կեմպի հիւրանոցի ժողովից յետոյ հրաժարուեց բեկտորի պաշտօնից), միենոյն ժամանակ հանդիսանուու է և հակակառավարական պարտիայի երեւի ներկայացուցիչներից մէկը: Հելսինգֆորսում՝ Կեմպի հիւրանոցում անցեալ նոյեմբերին կայացած նշանաւոր գաղտնի ժողովում, որտեղ խօսուել են կառավարութեան՝ միացման նախագծերին հակառակ գործելու միջոցների մասին, և յետազայ պասիւ ընդիմադրութեան ծրագիր է կազմուել, Բողենդալը ոչ միայն ամենաեռանդուն մասնակցութիւն է ունեցել, այլև նախագահել է և վէճերին ընթացք տուել: Գտնելով որ պետական ծառայութեան մէջ գտնուող և այն էլ մանկավարժական գործունէութեամբ պարապուող անձի ներկայացութիւնը յիշեալ ժողովում չէ կարող թոյլատրելի համարուել, գեներալ-նահանգապետն առաջարկեց Ռողենդալին՝ համաձայն 1902 թ. օգոստոսի 1-ն (14-ին) եղած Բարձրագոյն որոշման՝ ինդիր տալ գործից հեռանալու համար: Սյա պահանջը Ռողենդալը որոշած ժամանակին չէր իրագործել, ուստի ամբողջ գործը յանձնուել էր՝ քննելու և օրինական որոշում կայացնելու համար՝ Կայսերական ֆինլանդական սենատին, որը սակայն ձեւական հիմունքներով առաջնորդուելով՝ հնարաւոր չը համարեց համաձայնուել գեներալ-նահանգապետի կարծիքի հետ՝ այն բանի վրա հիմնուելով, թէ օգոստոսի 1-ին (14-ին) օրէնքն ի նկատի է ունեցել դատաստանական և վարչական ատեաններում ծառայողներին: Սենատը գտաւ, որ Ռողենդալը որպէս զպրոցական ատեանի ծառայող՝ յիշեալ օրէնսդրութեան ոյժին չէ ենթարկուում, ուստի և զժուարացաւ ընդունել գեներալ-նահանգապետի առաջարկութիւնը՝ նրան ծառայութիւնից հեռացնելու: Գեներալ-նահանգապետը մեծ զգուշութեամբ վերաբերուելով դէպի իր լիազօրութիւնները և հնարաւոր դատելով ներկայ պարագայում չը դիմել՝ անկառկած տեղին՝ բայց խիստ միջոցին՝ երկրից արտաքսելուն, — ամբողջ գործը ներկայացրեց Նորին Կայսերական Մեծութեան Բարձրագոյն բարեհայեցողութեանը, ամենահպատակօրէն միջնորդելով արձակել ծառայութիւնից բեկտոր Մառնու Ռողենդալին, որպէս մատազ սերնդի վրայ վնասակար ազդեցութիւն անողի: Միենոյն ժամանակ գեներալ-նահանգապետը ինդրեց բացատրել օգոստոսի 1-ին (14-ին) Բարձրագոյն որոշումն այն

մաքով, թէ վարչական ատեանների պաշտօնատար անձերին ծառայութիւնից հեռացնելուն վերաբերուազ օրէնքում ցոյց արուած կարգին են ենթարկուամ և ուսումնարանական ատեանի ծառայողները, բացի Կայսերական Ալեքսանդրեան համալսարանից: Ապրիլի 24-ին (մայիսի 7-ին) կայսացաւ Ռողենդալին ծառայութիւնից հեռացնելու Բարձրագոյն թողլաւութիւն և Բարձրագոյն որոշմանը՝ խնդրուած մաքով բացատրութիւն: („Պ. Ե. Վ. Բ. 4“)

Հրատարակուած է ներքին գործերի մինիսարի հետեւալ շրջարերականը նահանգապեանների և ոստիկանապեանների անունով.—«Ապրիլի 6 և 7-ին Քիշինեւ քաղաքում գլխաւորապէս հասարակ ժողովրդից բազկացած բազմութիւնը կատարեց անկարգութիւններ, որոնք ուղղուած էին հրէանների դէմ: Մեռան 45 հոգի սպանութիւնից կամ ծեծից, 74 հոգի ծանր վերքեր ստացան, իսկ 350 հոգի—թեմին վէրքեր: Անկարգութիւնների ժամանակ թարանուած էին հրէանների ունեցուածքը. թալանուած ուաւերուած են 700 տներ և 500 խանութիւններ: Այդ ամիթով կատարուած քննութիւնը պարզեց, որ անկարգութիւնների պատճառ է գարձել Բեսսարաբիայի նահանգում հրէանների և քրիստոնեանների մէջ զոյութիւն ունեցող լարուած յարաբերութիւնը, որի ընթացքում ամեն մի անհիմն լուր հրէանների մասին կարող էր վառել ամբոխի կրքերը: Մի այդպիսի առիթ գարձաւ այն սուտ մեղաղրանքը, թէ հրէանները ծիսական նպատակով լիերսոնի նահանգուի Դուրսաւարախ աւանուամ, կիեռում և նոյն իսկ Քիշինեւում սպանել են մի քանի քրիստոնեանների: Այդպիսի հընարովի լուրերի տարածուելլ այն հետահանքն ունեցաւ, որ մարտի վերջերում և ապրիլի սկզբում Քիշինեւի բռնուորների և հուսարակ ժողովրդի մէջ սկսեցին պատել յամառ կարծիքներ, թէ հարկաւոր է ծեծել հալածել հրէաններին: Հրապարակ եկան նոյն իսկ ձեռագիր թերթեր, որոնք կրկնելով յիշեալ մեղաղրանքները, կոչ էին անուամ ժողովրդին՝ Զատկի հէնց առաջին օրը կոտորել հրէաններին: Ապրիլի 6-ին Քիշինեւի Զուֆլինսկի հրապարակում հաւաքուեց մեծ բարմութիւն, որ սպասում էր բալագանների և ուրիշ զուարձալիքների բացուելուն: Ժողովրդի տրամադրութեան մէջ արտակարգ ոչինչ չէր նկատուամ: Մօսաւորապէս ժամը 4-ին մի քրիստոնեայ կին իր երեխան գրկած նատեց կարուսելի սայլակը: Կարուսելի տէրը, որ մի հրէայ էր, բարկացած խփեց կնոջը, այնպէս որ նա իր տեղից վայր ընկաւ և երեխային էլ զրկից զցեց: Այդ զէտքը գարձաւ անկարգութիւնների սկզբնապատճառը: Կատազած ամրութիւն սկսեց քարեր շպրտել գէտի հրէական հարկան լուսամուտները: Յետա

անկարգութիւնները տարածուեցին և միւս փողոցներում, ամբոխը ցրուեց քաղաքի դանաղան թաղերում և սկսեց աւերել հրէաների աներն ու խանութները։ Աւերողների ետեից յայտնուեցին թալանողները։ Սրադ տարածուած խառնակութիւնը անտանելի էր միանդամեց ճնշել, ուստի նա այն աստիճանն մեծացաւ, որ երեկոյան դէմ՝ կատաղած ամբոխը իր բռնութեան ենթարկեց հրէաներին, սպանելով և հոգու։ Ժամը մօտաւորապէս 10-ին անկարգութիւնները դադարեցին։ Հետեւեալ առաւոտք Քիշինեւի Նոր-Բագարում հրէաների մի խումբ, որ իր թւով աւելի մեծ էր, քան թէ այդտեղ դանուող քրիստոնեանների խումբը, փայտերով զինուած՝ յարձակուեց վերջիններիս վրայ։ Շուտով կոփեր դադարեց, բայց բաղարի միւս ծայրում հրէաները նորից համախմբուեցին և նորից յարձակուեցին քրիստոնեանների վրա, որ համեմատաբար աւելի սակաւաթիւ էին։ Հըրէաների կողմից ատրճանակ արձակեցին. քրիստոնեաններից մէկը վիրաւորուեց և գետին ընկաւ։ Դրանից յետոյ քաղաքում նորից սկսուեցին անկարգութիւններ. վերջ ի վերջոյ քրիստոնեանները աւերեցին հրէաների ըոլոր աները և կոտորեցին նրանց։ Դեռ երեկոյեան կարգ պաշտպանելու համար քաղաք ուղարկուած զինուորական պահակախմբերը չատ քիչ էին պահանջի համեմատութեամբ, ուստի նոր զօրքեր կանչուեցին, և այդ ժամանակ կարգապահութեան վերաբերմամբ զինաւոր իշխանութիւնը նահանգապետաից անցաւ զինուորական վարչութեանը։ Կանչուած զօրքերը սկզբում չը կարողացան անկարգութիւնները դադարեցնել, որովհետեւ ոստիկանութեան անբաւարար կարգադրութիւնների չնորհիւ, որ առաջ էր եկել հարլաւոր զնկավարութեան բացակայութիւնից, փողոցներ լցուած էին ոչ միայն խառնակիչ բաղմութեամբ, այլ և հետաքրքրուող հասարակութեամբ։ Յետոյ երբ զօրքերը որոշ սիստեմով դասաւորուեցին քաղաքի զանաղան մասերում, անկարգութիւնները ապրիլի 7-ին երեկոյեան դադարեցին և հետեւեալ օրը այլ ևս չը կրկնուեցին։ Քիշինեի դէպքերը կայսրութեան զանաղան կողմերում խրառում առաջ բերին հրէայ ազդաբնակութէան մէջ, իսկ քրիստոնեանների մէջ տարածեցին զանաղան անհիմն լուրեր հրէական ապադայ ջարգերի մասին։ Մի քանի քաղաքներում հրէաները ինքնապաշտպանութեան խմբեր կազմակերպեցին։ Ոստիկանութեան գեղարտամենտի գիրեկտորի պաշտօնավայրից ստանալով անկարգութիւնների մասին յիշեալ տեղեկութիւնները, ևս ամենահրպատակօրէն զեկուցում ներկացրի, և նորին Մեծութիւն թագաւոր Կայսրը բարեհաձեց հրամայել, որպէս զի նահանդների և քաղաքների իշխանաւորներին չեշառուի, որ նրանց վրայ պար-

տականութիւն է դրւում անձնական պատասխանատւութեամբ ամեն միջոցներ ձեռք առնել ժողովրդին նախազգուշացնելու և կարգը վերականգնեցնելու համար, որպէս զի այլ ևս ոչ մի տեղում վտանգ-չ'առաջանայ կեանքի և գոյքի վերաբերմար: Յայտնելով Զերդ գերազանցութեանը Բարձրագոյն կամքը, պարտք են համարում յայտնել ձեզ: 1) որ չը պէտք է թոյլատրել ինքնապաշտպանութեան ոչ մի համախմբում, և 2) քաղաքացիական իշխանութիւնները անկարգութիւնների ժամանակ ճշութեամբ կատարելով օրէնսդրքի հատ: II. 1816 յօդ. 45 և 16-րդ կէտերի պահանջները, իրաւունք չ'ունեն զօրքեր կանչելիս կարգապահութիւնը վերականգնեցնելու պարտականութիւնը զինուորական վարչութեան յանձնելու: Նրանք պարտաւոր են անձամբ ներկայ գտնուել և կանչուած զօրքերի ու ոստիկանութեան միահամուռ գործունէութեամբ վերջ դնել խառնակութիւններին: Առաջ բերած որոշումների համեմատ քաղաքացիական իշխանութիւնը դադարեցնում է իր կարգադրութիւնները միայն այն ժամանակի, երբ արդէն դիմել է տեղական զօրքի հրամանատարներին՝ խնդրելով զէնքի գործածութիւն և միմիայն այդպիսի գործունէութեան ընթացքում, այն ևս միայն այնտեղ, որտեղ անհրաժշտ է դիմել կարգը վերականգնեցնելու այդ ծայրայեղ միջոցին:

Անկարգութիւնները Թիֆլիսում:—«Ապրիլի 27-ի առաւտեան ժամը 10-ից սկսած՝ Թիֆլիսի կենտրոնական փողոցների վրայ երեացին շատ բանուորներ, որոնց թիւը մօտաւորապէս համառում էր 1000-ից մինչև 1200 մարդու: Շրջելով զրօնող հասարակութեան հետ միասին մայթների վրայ՝ նրանք սկզբում ոչ մի բանով կարգը չէին խանգարում: բայց կէսօրուայ ժամը 12-ին նրանց մի մասը, մօտաւորապէս բազկացած 100 հոգուց, արագութեամբ միացաւ Գոլովինսկի պրոսպեկտի մէջտեղում, արքունական թատրոնի հանդէպ, մի խումբ կազմեց և «ուռա» աղաղակելով՝ բարձրացրեց կարմիր դրոշակ, երեսում էր, որ ցուցարարները դիտաւորութիւն ունէին առաջ գնալ Գոլովինսկի պրոսպեկտի: Սակայն ոստիկանութեան ուժեղացրած կազմը և դժուապանները հնարաւորութիւն չը տուին ամրութիւն առաջ գնալու, իսկ անյապաշ վրայ հասած ոստիկանապետը՝ ձիւոր պահապանների հետ միամին՝ ցըեց ցոյց անողներին՝ թոյլ չը տալով ուրիշ բանուորների միանալ նրանց հետ:

Մօտաւորապէս 10 բոպէում կարգը փողոցներում վերականդնուեց: Զերբակալութիւն 63 հոգի: Յուցարարների և ոստիկանութեան մէջ տեղի ունեցած ընդհարման ժամանակ ծանր վաստողներ չեղան:

63 ձերբակալուածներից 30 հոգի արձակուեցին բանտից, որովհետև վկաների ցուցումով անհնար էր ճշարժէն որոշել նըրանց մասնակցութիւնը անկարգութիւններին: Մնացած 33 հոգին թիֆլիսի նահանգապետի կողմից ենթարկուեցին բանտարկութեան զանազան ժամանակամիջոցներով՝ սաստկացրած պաշտպանութեան օրէնքի զօրութեամբ»:

Բանտարկուեցին երեք ամսով 15 հոգի: Երկու ամսով՝ 2 հոգի: Մէկ ու կէս ամսով՝ 5 հոգի: Մի ամսով՝ 11 հոգի:

«Եյս որոշման գործադրութեան սկիզբը համարել 1903 թւականի ապրիլի 27-ի երեկոյեան 9 ժամից»:

Անկարգութիւններ Բագրում:—Բագրուի պլ. նահանգապետի վճիռը.

«1903 թւի մայիսի 2-ին ես, Բագրուի նահանգապետ գեներալ-մայիօր Ե. Ա. Օդինցեւ, քննելով գործի հանգամանքները փողոցային այն անկարգութիւնների առիթով, որոնք տեղի ունեցան Բագրում ապրիլի 27-ին, և համաձայն Կովկասի քաղաքացիական մասի պլ. կառավարչապետի պարտաւորական որոշման, որ հրատարակուած է 1902 թւի յունուարի 26-ին, պետական կարգը և հասարակական հանգստութիւնը պաշտպանելու համար հրատարակուած կանոնադրութեան 15-րդ յօդուածի հիման վրայ, որոշեցի: Փողոցում համախմբուելու համար հասարակական կարգի հակառակ գործողութիւններ անելու և ոստիկանութեան օրինական պահանջները չը կատարելու նպատակով՝ ենթարկել բանտարկութեան»:

Երեք ամսով՝ 10 հոգի: Երկու ամսով՝ 1 հոգի: Մէկ ամսով՝ 25 հոգի: Երեք շաբթով՝ 10 հոգի:

«Բանտարկութեան ժամանակամիջոցը հաշւել ապրիլի 27-ի ցերեկուայ 12 ժամից: Ստորագրեց գեներալ-մայիօր Օդինցեւ»:

Մայիսի 25-ին Պետերբուրգից ստացուած է հետեւալ հեռագիրը. «Լուսաւորութեան մինիստրի անունով տուած Բարձրարագոյն հրավարտակով յանձնարարուած է միջացներ ձեռք առնել, որպէսզի Աւհաստանի նահանգների բոլոր միջնակարգ դըպրոցներում կաթոլիկ դաւանութեան պատկանող աշակերտ-աշա-

կերտուհիներին իրանց մայրենի լեզուով՝ դասաւանդուի կրօնը
առաջիկայ ուսումնական տարեշրջանի սկզբից:

Մամուլի վերաբերեալ կարգադրութիւններ.

„Զական. Օծոքքնիւ լրագրի խմբագիր-հրատարակիչ
Ֆէոդորովին թոյլ է արուած նոյն անունով պարսկերէն մի լրա-
գիր հրատարակել Ասիաբաղում: Այդ լրագրի նպատակը կը լինի
նպատել ուսու-պարսկական յարաբերութիւնների զարգացման:
Պարսկերէն լրագիրը սկզբում՝ լոյս կը տեսնի այն չափով, որ
չափով նիւթեր կը հաւաքուեն, բայց մի ամսուայ ընթացքում
4 անգամից ոչ պակաս: Ապագայում լրագիրը կը դառնայ ամե-
նորեայ: Առաջին համարը լոյս կը տեսնի այս տարուայ յունիսի
1-ին:

Ապրիլի 28-ին ներքին գործերի մինիստրը որոշեց ասացին
նախազգուշացում յայտնել „Պրաօ“ և „Վօչօդէ“ լրագիրնե-
րին՝ նրանց վեասակար ուղղութեան պատճառով:

Մայիսի 16-ին „Վօչօդէ“ ստացել է երկրորդ նախազգու-
չութիւն:

Մայիսի 12-ին արգելուած է „Զնամյ“ թերթի հատով վա-
ճառումը:

Երջանային դատարանը Քիշինեւում „Բեսսարաբեց“ թեր-
թի հրատարակութեան իրաւունքը գնուեց Մալոկու օգաֆին՝ հե-
ռացնելով Կրուշեանին լրագրի հրատարակութիւնից:

Ներքին գործերի մինիստրը նորից թոյլապրեց „Նովости“
և „Զնամյ“ լրագիրների հատով վաճառումը:

Մայիսի 5-ին նորից թոյլապրուած է „Новое Время“-ի
հատով վաճառումը:

Նախաշգուշութիւն է արուած Ֆինլանդիայում լոյս տեսնող
«Helsingfors posten» թերթին,

Թոյլապրուած է Վ. Մեշերսկուն (Гражданинъ-ի խմբա-
գիր-հրատարակչին) հրատարակել շարաթը մի անգամ հանրա-
մատչելի „Дружескія Рѣчи“ թերթը:

Պետերբուրգում „Гласность“ լրագրի իրաւունքը անցնում
է Ա. Սուվորինին, որին թոյլապրուած է „Гласность“ անունը
փոխարինել „Русь“ անունով:

Օբէնողրութիւնների ժողովածուի № 44-ում հրատարա-
կուած է արևմտեան իննը նահանդներում (Վիճոփ, Վիտեբսկի,
Վոլոնտի, Գրոդնոփ, Կիեվի, Կովոփ, Մինսկի, Մոգիլյակի և